

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ Աստղիկ Արտաշեսի Մելիք-Քարամյանի՝ 2021թ. հոկտեմբերի 13-ից 2022թ. մայիսի 04-ն իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Աստղիկ Արտաշեսի Մելիք-Քարամյանս, 2021թ. հոկտեմբերի 13-ից 2022թ. մայիսի 04-ն աշխատելով որպես ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- Քաղաքացիների ընդունելության, դիմումների ընդունման, ուսումնասիրության, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում, մասնավորապես՝ օտարերկրացիների դիմումների պատասխանների պատրաստում, քաղաքացիների և ՀՀ իրավասու մարմինների՝ ԱՊՀ երկրների իրավասու մարմիններին հասցեագրված հարցումների ընթացքի ապահովում, ԱՊՀ երկրների իրավասու մարմիններից ստացված հանձնարարականների ուսումնասիրություն, քննարկում, կատարման համար համապատասխան ընթացքի ապահովում, ԱՊՀ երկրներ ուղարկվող պաշտոնական փաստաթղթերի թարգմանությունների ապահովում:
- «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993 թվականի, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի 1980 թվականի, «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» Հաագայի 1996 թվականի կոնվենցիաների շրջանակներում օտարերկրյա պետությունների կենտրոնական և իրավասու այլ մարմինների փաստաթղթաշրջանառության ապահովում, գրությունների պատրաստում, այդ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում, թարգմանությունների ապահովում:
- Վերը նշված կոնվենցիաներին կից ուղեցույցների, ձեռնարկների, երեխաների որդեգրման ոլորտը կանոնակարգող միջազգային փորձի ուսումնասիրություն, տեղեկատվության հավաքագրում և ներկայացում:

- 2007 թվականից Հայաստանի Հանրապետությունում որդեգրված երեխաների, վերջիններիս որդեգրած անձանց տվյալների, որդեգրման պետական գրանցումների, որդեգրված երեխաների հետորդեգրման զեկույցների փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակով հավաքագրում, դասակարգում և վիճակագրական տվյալների հաշվարկում:

Ի լրումն 13.10.2021թ.-ի պայմանագրում ամրագրված գործառույթների՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության պետի 13.12.2021թ. հանձնարարակափ համաձայն՝ իրականացրել են Գործակալության արտաքին կապերի սպասարկման գործառույթը, մասնավորապես, Գործակալության՝ այլ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ հանդիպումների կազմակերպումը, ըստ անհրաժեշտության՝ դրանց մասնակցությունը, սղագրումը և նշվածի հետ կապված այլ գործողությունների կատարումը:

Հարգանքով՝



Աստղիկ Մելիք-Քարամյան
04.05.2022թ.